ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԻԶԱԲԵԼԼԱ ԱԲԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Աբգարյան,

ի պատասխան Ձեր 18.06.2024թ. գրության՝ տեղեկացվում է.

Թումանյան, Կողբացի, Փարպեցի փողոցների երթևեկելի հատվածներում առկա փոսերի ասֆալտապատումը, որոնց լուսանկարները կցված են Ձեր կողմից Երևանի քաղաքապետին հասցեագրված գրության մեջ, կներառվի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի 2024 թվականի «Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում» փոսալցման ծրագրում:

Միաժամանակ տեղեկացվում է, որ վերոնշյալ գրության մեջ լուսանկարով ներկայացված մայթային հատվածը վերանորոգվել է:

Գծանշումները հիմնականում իրականացվում են աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչությունից՝ փողոցներում ճաքալցման, միջին նորոգման կամ հիմնանորոգման աշխատանքների ավարտման վերաբերյալ տեղեկատվություն ստանալուց հետո: Մեծ թվով փողոցներում դեռևս վերը նշված աշխատանքները չեն ավարտվել: Քանի որ գծանշումները հանդիսանում են ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոց, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման նկատառումներից ելնելով, առանձին ճանապարհահատվածներում, հետիոտնային անցումները (ընդհանրապես չէին երևում) գծանշվել են:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ